Է. ՏԱՐԻ 2040 ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 24 ՍԱՀՄԻ 1383–Հ. Տ. 2 ՆՈՅԵՄԲԵՐ 1890–Ն Տ. 14 ՆՈՅԵՄԲԵՐ 1890–ՀԻՃՐ. 1 ՐԷՊԻԼ ԱԽԸՐ 1308 ՈՒՐԲԱԹ

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՆԷ ՏՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Գալաթիա, Նորատունկեան-Խան

درعليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده آره‌وك
غزته‌سى اداره‌سنه

Direction du Journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Յարիւն գահնիւն տարեաց	160
» » Վեցամսեայ » »	80
» » Եռամսեայ » »	40
Դուռաց : »	200
» » »	100
Օտար երկիրք	50
» »	25
Դուռս գրեալս Յանձնուելիք վասն ե	
Խմբագրութիւն.	...թիւն ետ լսուիլ։

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 2 ՆՈՅԵՄԲԵՐ, 1890

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՆԻՈՅ ԽՆԱՄԱԿԱԼ-ԹԱԳՈՒՀԻՆ

Աւասիկ կին մը որոյ վրայ բովանդակ քաղաքակիրթ աշխարհն սքանչանօք կը խօսի։ Տակաւին երիտասարդ, այրի մնաց Ալֆոնսօ ԺԲ թագաւորէն, երկու փոքրիկ աղջիկներով։ Ցղի էր երբ կորոյս իւր վաղամեռիկ ամուսինն ու տէրն, և բարեբախտութիւն ունեցաւ մանչ զաւկի մը ծնունդ տալու, որ Ալֆոնսօ ԺԴ անուամբ Սպանիոյ թագաւորն է իւր ծնած օրէն։ Բայց իւրօք երկրին վեհապետուհին այն երիտասարդ մայրն է, որ՝ աւստրիացի արհիդքսուհի գոլով՝ Սպանիացւոց համար օտարական լինելու դժուարութիւնն եւս ունէր։ Օտարական իշխանաւորք բարեբախտ չեն եղած Սպանիոյ մէջ։ Բայց իբրեւ կին, իբրեւ մայր, իբրեւ վեհապետուհի, մանաւանդ իբրեւ մայր-հասարակաց, Քրիստինէ խնամակալ-թագուհին կըրցաւ իւր երկրորդ հայրենեաց մէջ ջերմագին ժողովրդականութիւն շահիլ, և թէպէտ կարի դիւրաբորբոք ժողովրդեան մը վրայ կ'իշխէ, բայց իւր գահ ժամանակիս ամենէն ապահով և հաստատուն գահերէն մին կը նկատուի։

Այս օրերս սպանիական և օտար լրագիրք միահամուռ գովեստիւք կը նշանակեն Քրիստինէ թագուհւոյն քաջասրտութիւնն, որով չուզեց Մատրիտ մայրաքաղաքէն հեռի կենալ, երբ հընտախտի և ապա ծաղկի ահռելի համաճարակներ կոտորած կ'ընէին հոն։ Արքայական գերդաստանին հետ կըրնար ի Սան-Սէպաստիանօ ապահով տեղ մը կենալ, սրտագրաւ ծովեզրի մը վրայ, ուր ապարանք մը չինել կուտայ իրեն և իւր որդւոյն։ Բայց սկզբունք դրած է իւր ժողովրդեան վիճակակից լինել, իւր ժողովրդեան սպառնացող վտանգաց մէջ տեղ գրտնուիլ, և միայն իւր որդին՝ մանուկ թագաւորը՝ թողլով ի Սան-Սէպաստիանօ, ինք Մատրիտ վերադարձաւ։

Սպանիական ոստանին հանրային առողջութիւնը շատ թերի վիճակի մէջ է։ Հնտախտը վախցուածին չափ կոտորած չըրաւ, բայց ծաղիկն հնտախտէն անհամեմատ աւելի զոհեր կ'ընէ։ Աղքատ թաղերն աղտոտ են ընդհանրապէս, և այն թաղերու մէջ յետին թշուառութեան մատնեալ կը գտնուի ստուար բազմամարդութիւն մը, որով ամեն տուն վարակման կեդրոն մը դարձած է։ Քրիստինէ թագուհւոյն տնօրինութեամբ, արքայական պալատան մէջ բարձրագոյն պաշտօնեայն մինչեւ յետին սպասաւորն ամեն ոք անխիտիր պատուաստեցաւ, և այս զգուշական միջոցներ ի գործ դրուելէն ետքը, մանուկ թագաւորն եւս բերուեցաւ ի Մատրիտ, ժողովրդեան սիրտ տալու համար։ Մանուկ թագաւորն ամեն օր իւր մօր հետ դուրս կ'ելնէ, իւր ժամանակին մեծագոյն մասը բաց օդի մէջ կ'անցուցնէ, Մատրիտի և շրջակայից զբօսավայրերուն մէջ։ Բարեբախտապէս քաջառողջ է, թէեւ հիւանդոտ օր մը զաւակ, (մայրն և սանտուն շատ քաջառողջ էին,) և Սակարանի չահագէտք որք փոքրիկ վեհապետին հարբուխներէն և հանգստեան օրերէն օգտուելով թղթոց գիները կոտրել փորձած են յաճախ, կ'երեւի թէ գնոց անկմամբ դրամ շահելու համար այսուհետեւ նոր հնարք մը պիտի մտածեն։

Բայց Քրիստինէ թագուհին միայն իւր օգոստափառ զաւկին մայրը չէ։ Հասարակաց մայրն է։ Աղքատաց պէտքերուն անձամբ կը հսկէ։ Ամեն վտանգ արհամարհելով, կ'այցէ աղքատիկ թաղերն։ Իւր տնօրինութեան ներքեւ մայրաքաղաքին կուսակալն ու քաղաքապետութիւնը միջոցներ ի գործ կը դնեն աղքատ թաղերը մաքրելու և հիւանդութեան դէմ մարտնչող աղքատաց օգնութիւն հայցնելու համար։ Թագուհւոյն քրիստոնէական ընթացքէն խրատեալ, բարձր դասու տիկնայք եւս աղքատաց օգնութեան կը հանին, և այս գերազանց հոգածութեանց շնորհիւ, անոյշ թշուառներ իրենց խոնարհ բնակարաններու մէջ ազնուասիրտ տիկիններու մարդասիրական այցն ու մայրական խնամքը կ'ընդունին։

Բարեպաշտութիւն և քրիստոնէական բարեմասնութիւնք արդէն աւանդական են Քրիստինէ թագուհւոյն գերդաստանին մէջ։ Հայրենասիրութիւնն եթէ Սպանիացւոյն երեւելի հիրքերէն մին է, իւր կրօնասիրութիւն ո՛չ նուազ նշանաւոր է, և յայտմ մասին Սպանիոյ արքայական գերդաստանն էապէս բարեպաշտ ժողովրդի մը աւանդութեանց կը հետեւի։

Քրիստինէ խնամակալ-թագուհւոյն մայրն, Հապսպուրկեան Իգպէլլա արհիդքսուհին, յատկապէս Վիեննայէ Մատրիտ եկաւ՝ ո՛չ միայն իւր դուստրը և իւր վեհափառ թոռը տեսնելու, այլ և բարեպաշտական ուխտ մը կատարելու։

Տարի մը յառաջ, երբ մանուկ թագաւորը ծանրապէս հիւանդ էր, և երբ քանիցս իւր մահը գուժեցին հեռագիրք, Իգպէլլա արհիդքսուհին ի Սարակոսա Տէր Փիլարի Տիրամօր ուխտը բրած էր հանդիսաւոր պատարագ մատուցանել տալ, և կատարեց իւր ուխտ։

Մատրիտ հասնելուն պէս, մայրարհիդուքսը շոգեկառք նստաւ դէպի մայրաքաղաքն Արակոնի նահանգին (Սարակոսա,) և կայարանէն ուղղապէս եկեղեցի գնաց ուր խուռն բազմութիւն մը արդէն իրեն կը սպասէր։ Երեկոյին Մատրիտ վերադարձաւ իւր զաւկին ու թոռան քով, շարունակ 24 ժամ ճամբորդելով, Վիեննայէ ի Մատրիտ ճամբորդութենէն զատ։ Տէր Փիլարի Մայր-Աստուածածնայ պաշտօնն յոյժ տարածեալ է Սպանիոյ մէջ։ Արակոնի նահանգին մէջ, Տէր Փիլարի Տիրամայրը դրօշ մ'է, նշանաբան մ'է տեղացի սպանիական բարեպաշտ ժողովրդեան համար։ Սպանիոյ պահպանութեան համար մղեալ պատերազմին մէջ, Սարակոսայի պաշտպանք իրենց ընդհանուր հրամատարուհի հռչակած էին զայն։ Ատի կրնայ մակաբերուիլ տեղական բարեպաշտութեան ջերմութիւնը։ Սպանիա գացող զբօսաշրջիկներ յատկապէս Արակոնի մայրաքաղաքը կ'երթան սքանչանօք դիտելու այս տեղային պաշտօն առ Սուրբ Կոյսն։ Ամենէն ազատամիտ Արակոնցիք անգամ այս աւանդութեան ազդեցութենէն զերծ չեն մնար Սպանիոյ ամենէն աւելի ազատամիտ մասն համարուած այն նահանգին մէջ։ Իրենց պաշտպան սրբուհւոյն վրայ այս հաստատ հաւատքով ու վստահութեամբ, Արակոնցիք կ'ըսեն թէ ամենէն դժուար ձեռնարկութիւնք յաջողած են իրենց, և բարեպաշտութիւն իրենց համար ո՛չ միայն կրօնային առաքինութիւն այլ և զօրութիւն ընդունած է։ Այս զգացումներն յարգելով, արքայական գերդաստանին անդամք աւելի եւս սիրելի եղած են սպանիացի ժողովրդեան։

ՏՓԹ. ՔՈՒԽ ԵՒ ԻՒՐ ԴԻՒՑ

ՏՓԹ. ՔՈՒԽ ԿԵՂԾՄԱՇԿՈՒԹԵԱՆ ԵՒՍ ԴԱՐՄԱՆԸ ԿԸ ԳՏՆԷ

Ֆէյ-ըսին Պերլինի թղթակիցը կը գրէ թէ Տքթ. Քոխի փորձերը լեռվին յաջողած են թոքախտաւոր անասնոց վրայ, և Բարեգործական Հիւանդանոցին մէջ մարդոց վրայ ըրած փորձերն ալ յաջող վիճակի մէջ են։ Իւր գիւտ այլ եւս տարակոյս չի վերցներ։

Կրթական նախարար Պ. Կոսլէր կատարեալ վստահութեամբ ու գնայլմամբ տեղեկագիր մը մատոյց Կայսեր Տքթ. Քոխի յաջող գիւտին վրայ, և այս տեղեկագրոյ վրայ Կայսրն հրամայեց յատուկ հաստատութեան մը բացումն, ի գլուխ որոյ Տքթ. Քոխ ամեն դիւրութիւն պիտի ունենայ ի գործ դնելու իւր գիւտ և յառաջ տանելու իւր զննութիւններ։ Դրամական հարցերէն դուրս մնալը ապահովեցուցած զանոնք իրեն։ Չէր գիտեր, բայց բնազդումով կը զգար թէ իր ամեն օր տեսածներէն ուրիշ էակներ կան, թէ իր աչքն առջեւ բուսածներէն ուրիշ ծաղիկներ կան, թէ անհամար հրաշալի բաներ կան որք անծանօթ են իրեն։ Եւ յեսոյ ա՛մ գիտէ իր հոգւոյն մէջ ձայն մը իր մօր վրայ չէր խօսած ասոր։

Կոմսը չ'կրցաւ դողալը զսպել։

—Տարակոյս չկայ որ, շարունակեց Պ. Վան Օսէն, իր միտքը տաժանելի աշխատութիւն մը կատարելով, տեսակ մը յայտնութիւններ տեղի ունեցած են իր հոգւոյն մէջ։ Դժբաղդաբար, նորածիլ փրթթում մը եղաւ միայն, և այս ամենքն ետքդի պէս անցան։

—Ի՞նչ ըսել կուզես, հարցուց կոմսը թրթռացող ձայնով մը։

—Ի՞նչ ըսել կ'ուզեմ։ Հիմա կը հասկընաս։ Այն վիճակն յորում կը գտնուէր աղջիկդ, սկսաւ վերջապէս անհանգիստ ընել զքեզ։ Այն ատեն միայն, բայց առանց հասկնալու թէ պէտք ունի օգնի, թէ ապաստութեան պակասութենէն կը խղդուի, կ'որոշես անոր հետ աշխատութիւն մը ընելու։ Սպասած արդիւնքդ ձեռք չձգեցիր։ Ինչո՞ւ։ Որովհետեւ միշտ պակաս մնաց, և չես տեսներ որ հոգին ու սիրտը հիւանդ են, կը մաքառիս այդ հիւանդութեան դէմ, առանց անոր պատճառը փընտռելու։ Չես գուշակեր թէ աղջկանդ միտքը իր բանտին պատերէն անդին կ'անցնի և կը մոլորի ի խնդիր ելնելով այն բաներուն զորս չգիտեր, որովհետեւ դու կամաւ չես սովորեցուցած զանոնք իրեն։ Չէր գիտեր, բայց բնազդումով կը զգար թէ իր ամեն օր տեսածներէն ուրիշ էակներ կան, թէ իր աչքն առջեւ բուսածներէն ուրիշ ծաղիկներ կան, թէ անհամար հրաշալի բաներ կան որք անծանօթ են իրեն։ Եւ յեսոյ ա՛մ գիտէ իր հոգւոյն մէջ ձայն մը իր մօր վրայ չէր խօսած ասոր։

Կոմսը չ'կրցաւ դողալը զսպել։

—Տարակոյս չկայ որ, շարունակեց Պ. Վան Օսէն, իր միտքը տաժանելի աշխատութիւն մը կատարելով, տեսակ մը յայտնութիւններ տեղի ունեցած են իր հոգւոյն մէջ։ Դժբաղդաբար, նորածիլ փրթթում մը եղաւ միայն, և այս ամենքն ետքդի պէս անցան։

—Ի՞նչ ըսել կուզես, հարցուց կոմսը թրթռացող ձայնով մը։

—Ի՞նչ ըսել կ'ուզեմ։ Հիմա կը հասկընաս։ Այն վիճակն յորում կը գտնուէր աղջիկդ, սկսաւ վերջապէս անհանգիստ ընել զքեզ։ Այն ատեն միայն, բայց առանց հասկնալու թէ պէտք ունի օգնի, թէ ապաստութեան պակասութենէն կը խղդուի, կ'որոշես անոր հետ աշխատութիւն մը ընելու։ Սպասած արդիւնքդ ձեռք չձգեցիր։ Ինչո՞ւ։ Որովհետեւ միշտ պակաս մնաց, և չես տեսներ որ հոգին ու սիրտը հիւանդ են, կը մաքառիս այդ հիւանդութեան դէմ, առանց անոր պատճառը փընտռելու, չես գուշակեր թէ աղջկանդ միտքը իր բանտին պատերէն անդին կ'անցնի և կը մոլորի ի խնդիր ելնելով այն բաներուն զորս չգիտեր, որովհետեւ դու կամաւ չես սովորեցուցած զանոնք իրեն։ Չէր գիտեր, բայց բնազդումով կը զգար թէ իր ամեն օր տեսածներէն ուրիշ էակներ կան, թէ իր աչքն առջեւ բուսածներէն ուրիշ ծաղիկներ կան, թէ անհամար հրաշալի բաներ կան որք անծանօթ են իրեն։ Եւ յեսոյ ա՛մ գիտէ իր հոգւոյն մէջ ձայն մը իր մօր վրայ չէր խօսած ասոր։

Կոմսը չ'կրցաւ դողալը զսպել։

—Տարակոյս չկայ որ, շարունակեց Պ. Վան Օսէն, իր միտքը տաժանելի աշխատութիւն մը կատարելով, տեսակ մը յայտնութիւններ տեղի ունեցած են իր հոգւոյն մէջ։ Դժբաղդաբար, նորածիլ փրթթում մը եղաւ միայն, և այս ամենքն ետքդի պէս անցան։

—Ի՞նչ ըսել կուզես, հարցուց կոմսը թրթռացող ձայնով մը։

—Ի՞նչ ըսել կ'ուզեմ։ Հիմա կը հասկընաս։ Այն վիճակն յորում կը գտնուէր աղջիկդ, սկսաւ վերջապէս անհանգիստ ընել զքեզ։ Այն ատեն միայն, բայց առանց հասկնալու թէ պէտք ունի օգնի, թէ ապաստութեան պակասութենէն կը խղդուի, կ'որոշես անոր հետ աշխատութիւն մը ընելու։ Սպասած արդիւնքդ ձեռք չձգեցիր։ Ինչո՞ւ։ Որովհետեւ միշտ պակաս մնաց, և չես տեսներ որ հոգին ու սիրտը հիւանդ են, կը մաքառիս այդ հիւանդութեան դէմ, առանց անոր պատճառը փընտռելու, չես գուշակեր թէ աղջկանդ միտքը իր բանտին պատերէն անդին կ'անցնի և կը մոլորի ի խնդիր ելնելով այն բաներուն զորս չգիտեր, որովհետեւ դու կամաւ չես սովորեցուցած զանոնք իրեն։ Չէր գիտեր, բայց բնազդումով կը զգար թէ իր ամեն օր տեսածներէն ուրիշ էակներ կան, թէ իր աչքն առջեւ բուսածներէն ուրիշ ծաղիկներ կան, թէ անհամար հրաշալի բաներ կան որք անծանօթ են իրեն։ Եւ յեսոյ ա՛մ գիտէ իր հոգւոյն մէջ ձայն մը իր մօր վրայ չէր խօսած ասոր։

Հազիւ տասն տարի յառաջ, Տքթ. Քոխ փոքր քաղաքի մը մէջ բժիշկ էր, այնքան փոքր որ քարտէսին վրայ պէտք է փնտռուիլ,— Վոլշթայն։ Քոխ 47 տարեկան է այժմ։ Լեռնական մը կրնայ համարուիլ, քանի որ Հարց կոչուած լեռնոտ գաւառին մէջ ծնած է, ի Քլօսթալ։ Կոթինկէնի Հայասրանին մէջ ուսումնասիրած, Հանովերի մօտ աւանի մը բժիշկ եղաւ։ Միշտ միայնութիւն սիրած է, իբրեւ յարմար վիճակ իւր զննութեանց։ Այն ատենէն ամենամանր արարածներու քննութեամբ կը պարապէր։ Ցաճախորդի կարօտ էր սակայն, և ապրելու համար աւանէ աւան կը շրջէր, նա՛ որ օր մը բովանդակ աշխարհի բժիշկը պիտի լինէր։ Հանովերի շրջակայքէն ի Փոզէն անցաւ, և Ռաքվից աւանին մէջ, յեսոյ ի Վոլշթայն հաստատեցաւ։ 1880ին գատի մը մէջ իբրեւ բժիշկ իւր մասնագիտութեան դիմեցին իշխանութիւնք, և այն ժամանակ համբաւ շահեցաւ։ Իւր խուզարկութիւնք և զննութիւնք ուշադրութիւն գրաւեցին։ Պերլինի առողջապահական յանձնաժողովոյն անդամ կարգեցաւ։ Այն ատեն գտաւ թոքախտին միկրոբն, և յօրէ անտի կը փնտռէր այս միկրոբը բնաջինջ ընելու միջոցն ալ։

Կը յիշուի թէ 1883ին Քոխ դերման կառավարութեան ծախիւք Եգիպտոս և Հնդկաստան ղրկուեցաւ, հնտախտի վրայ զննութիւններ կատարելու դիտմամբ։ Դատաւ ստորակէտ-ձեւով հռչակաւոր միկրոբն հընտախտի, որը հակամիկրոբը կամ սպանիչ դեղը դժբախտապէս ցարդ ո՛չ ոք կրցաւ գտնել։ Ի վերադարձին 100 հազար մարք պարգև ստացաւ, բժշկային պետական խորհրդական եղաւ, առողջապահական կաճառին տնօրէն, և այն։ Այն ժամանակէն ի վեր սքանչելի համբերութեամբ և աշխատասիրութեամբ կը մաքառէր իւր փոքրիկ եւ ցաւս վայր տնտեսանելի թշնամւոյն դէմ, թոքախտի միկրոբին դէմ, զոր վերջապէս սպաննելու յաջողեր է։

Քոխ և Փասթէօռ, երկոքին գուգափառ գիտնականք, յաճախ տարակարծիք գտնուած և իրարու դէմ խօսած են։ Ֆէյ-ըսի թղթակիցը կը յիշէ ժընէվի առողջապահական համաժողովոյն մէկ նիստն, ուր երկոքին նշանաւոր գիտնականք չհապրդիւռ վիճաբանութեան մի բռնուեցան, որ բաւական կծու կերպիւ վերջացաւ։

ԱՒՍՏՐԻԱ-ՀՈՒՆԳԱՐԻԱ

Վիեննայի նահանգին Երեսփ. ժողովոյն մէջ, հակահրէական երեսփոխանք ոմանք խօսք առին՝ փոխադարձ ապահովագրութեանց վրայ օրինագծի մը վիճաբանութեան առթիւ։ Հակահրէական Պ. Տէօց և նմանապէս հակահրէական Շայնէր քահանայն ապահովագրական ընկերութեանց դէմ խօսեցան։ Այս վերջինս ըսաւ թէ ինք պետական իմաստով ընկերվարական մ'է, այսինքն՝ կը պնդէ թէ կառավարութիւնն ինք ընկերվարութիւն պէտք է ի գործ դնէ յօգուտ հանրութեան, և թէ ի մասնաւորի ամեն ապահովագրական ընկերութիւնք պէտք է գնուին կամ գրաւուին կառավարութեան կողմէ յօգուտ հասարակաց։ Պ. Լիւկըր նորօրինակ տեսութիւն մը յայտնեց, որուն համեմատ միայն Իսրայէլի կրօնին պատկանողներն հրեայ համարելու չէ, այլ զամեն անոնք որ Հրէից յատուկ ինչ ինչ տնտեսական կամ դրամական գաղափարաց համեմատ կը վարուին։ Այսպիսիք տնտեսապէս եւեթ քրիստոնեայ են։ իրօք հրեայ են։ Պետութիւնը պէտք է դրաւէ ապահովագրական ընկերութիւններն, որպէս զի իրենց մեծ դրամագլուխներով հասարակութիւնը չարաչար չահագործելու կարող չլինին։ Պ. Լիւկըր ի վերջոյ նշանակեց քանի մը քաղաքական մարդիկ իբրեւ դրամով շահուած։ Վարչութիւնն եւս աչք կը դոցէ Դրամագլխին, ըսաւ։

Նոյն նստին մէջ Վիեննայի նահանգապետն յայտարարեց թէ նախարարութիւնն որոշած է Վիեննա մայրաքաղաքին հետ միացնել իւր արուարձանները, ժողովրդեան հաւանութեամբ։

ՇԱՀԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԱՓՐԻԿԷԻ

Լիվրփուլի Ա-ե-ր-ի-ն Լը-թէրը կը ծանուցանէ թէ ժտագրութիւն կայ հզօր ընկերութիւն մը կազմել արեւմտեան Ափրիկէի բնական հարստութիւնները շահագործելու դիտմամբ։ Տասն միլիոն անգլ. ոսկի դրամագլուխ պիտի ունենայ ընկերութիւնն, որոյ գաղափարն յղացողներու գլուխն են Ուէսթմինսթրի մեծահարուստ դուքսն և Պ. Սիթէնլի։

ԿԻՊՐՈՍ

Ն-ա, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնաթերթն, իւր նոյմ. 8 թուով կը գրէ։

Քանիցս նշանակած ենք Կիպրացւոց գանգատներն իրենց կղզւոյն տընտեսական վիճակին նկատմամբ։ Այս վիճակ կը ծանրանայ օր ըստ օրէ, և Մ-ա-դ-ա-ն Մ-ա-ղ-ի անգ. հանդիսին վերջին թուոյն մէջ, Պ. Ռ. Համիլթըն Լանկ խիստ անգոհացուցիչ նկարագրութիւն մը կ'ընէ։ Կը հաստատէ թէ հունձքերն հետզհետէ կը նուազին, կալուածոց արժէքը կոտրած է մեծապէս, և տուրքերը չարունակ կը բարձրանան։ Կղզին այցելողներ սա տպաւորութիւնը կ'ունենան թէ յառաջդիմական վիճակի մէջ չէ բնաւ, ընդհակառակն յետադիմութիւն կայ։ Պ. Համիլթըն Լանկ տեսած է զկիպրոս 1885ին, և քիչ ետքն անոր դիմացը գտնուող Լիբանանու գաւառն եւս։ Զարմացած մնացած է ի տես սոյն գաւառի բարգաւաճման՝ կղզւոյն յետնեալ դրութեան հանդէպ։ Այս կացութեան պատճառք բազմադիմի են, և Կիպրոսի յոյն արքեպիսկոպոսն որ անցեալ տարի Անգլիա գնաց ի գլուխ կիպրացի պատգամաւորութեան մը՝ Կիպրոսի տնտեսական վիճակին վրայ խօսելու, կը նշանակէ հոգագործական դրամատան մը պակասութիւնը, մանր դրամոց անբաւականութիւնն և կղզւոյն վարչական խորհրդոյն մէջ բնիկ տարրին յոյժ սակաւաթիւ գտնուիլն՝ իբրեւ գլխաւոր պատճառք տնտեսական այս անգոհացուցիչ կացութեան։

ԲԱԼՆՈՒԻ ԿՈՄՍՆ Ի ՓԱՐԻԶ

Աւստրիոյ-Հունգարիոյ նախարարապետ Բալնուի կոմսն ի Փարիզ այցելութիւնը մեծապէս ուշադրութիւն կը գրաւէ։ Ֆրանսական ոստանին մէջ մի քանի նշանաւոր անդամներու հետ խորհրդակցութիւններ ունեցեր է։ Յայտնի է թէ Աւստրիա Թղթադրամը բառնալով մետաղեայ դրամոց շրջաբերութիւն կ'ուզէ հաստատել, և քանի ամիսէ ի վեր աւստրիամաճառ լրագրութիւնն այս բարեփոխութեան միջոցներուն վրայ կը գրէ։ Առ այս Աւստրիա պէտք ունի 300 միլիոն ոսկեդրամ ֆիորինի, այսինքն իբր 700 միլիոն ֆրանքի։ Կը հաշուուի թէ բովանդակ աշխարհի վրայ 12 միլիառ ոսկեդրամ կայ, որոյ կէսը, վեց միլիառն, ի Ֆրանսա կոխուած։ Հիմա Ֆրանսայի մէջ հինգ միլիառ ֆրանքի ոսկեդրամ կայ, և ատի կը հետեւի թէ այն թանկագին մետաղի մասին հարստագոյն երկիրն այժմ Ֆրանսա է։

ԸՆՏՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՆ Ց'ԻՏԱԼԻԱ

Իտալացի ազատ-որմնադրաց մեծվարպետը, Պ. Ադրիանօ Լէմմի, շրջաբերական մը գրեց ամեն օթեակներուն, որպէս զի՝ քաղաքական ընտրութեանց առթիւ ընտրելիներ նշանակելով՝ ազատ որմնադիրք կուսակցական ոգւով չգործեն։ Ազատ-որմնադրութիւնը պէտք է հակառակի ծայրայեղ կղերամիտ կուսակցութեան, և ամեն անոնց որք բաւական ապացոյց չեն տար անչահախնդրութեան, հոգւոյ անկախութեան և հոգածութեան վասն գործաւոր դասուց։ Պէտք է ազատ-որմնադիրք հակառակին անոնց որք ծայրայեղ և ծթռած գաղափարներու յարեալ կը մնան։ Այս շրջաբերական ուշագրաւ կը համարուի այն պատճառաւ որ առաջին անգամն է ազատ-որմնադրութիւնն համարձակապէս ընտրական պայքարի մը կը մասնակցի։ Պ. Քրիսպի ազատ-որմնադրաց պետերէն է, և լաւ յարաբերութիւններ կը տածէ այն ազանդին հետ։

ՕՐԼԷԱՆԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆ

Օրլէանեան գերդաստանի գլխաւոր անդամոց զբաղումն ուղեւորութիւն է այս պահուս։ Փարիզի կոմսն և իւր երեց որդի Օրլէանու դուքսն Անգլիա հասան։ Քոնինսթաունէ Լիվրբուլ եւ անտի Պըքինկէմ պիտի երթան, ուր քաղաքապետութիւնն ի պատիւ իրեն հացկերոյթ պիտի տար։

Օրլէանի Հանրի իշխանը վտանգաւոր ուղեւորութիւն մը ի գլուխ հանեց, Ռուսիոյ արեւելեան ստացուածոց արեւելեան ծայրակէտէն սկսեալ և Կեդր. Ասիոյ մէջտեղէն անցնելով ի Թոնքին ժամանելով։ Իւր ուղեկցաց հետ այս ֆրանսացի իշխան անցեր է այնպիսի երկիրներէ ուր ցարդ ո՛չ մէկ եւրոպացի ոտք կոխեր է։

Ի ՊԵՐԼԻՆ

Ամեն լրագիրք կը խօսին հակահրէական ծանօթ քարոզիչ պատուելի Սթէօքերի Արքունեաց քարոզչի պաշտօնէն հրաժարման վրայ։ Քրէյց Զայտունգ եւեթ հաւատարիմ կը մնայ սոյն լուսերական հոմուին հակահրէական վարդապետութեանց, զորս այսուհետեւ ալ պաշտպանելու յայտարարութիւն կ'ընէ։

ԹԷՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻՔՊՈՒՌ

ԽԵԼԱԳԱՐԸ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ԹՇՆԱՄԻՆ

—Եւ կը ներես որ առանց դարձուածքի խօսիմ քեզ, համարձակորէն, ինչպէս իրաւունք ունի մարդ ճշմարիտ բարեկամի մը, եղբօր մը խօսելու։

—Այո։

—Է՛հ, բարեկամս, տեսնելով որ անմիտ մը, դատելու անկարող, բանակնութիւնը կորսնցուցած մարդ մը չես դու, անաչառօրէն կ'ըսեմ քեզ. պարսաւելի է քու ընթացքդ։

Կոմսը զարմացման շարժում մը ըրաւ։

—Բօլ, ըսաւ Պ. վան Օսէն, ինձ թոյլ տալէ ետքը համարձակօրէն խօսիլ, իրաւունք չունիս այլ ևս զայրանալու։ Որչափ ալ խիստ ըլլայ իմ բռնած լեզուս, պէտք է որ մտիկ ընես։

—Ճշմարիտ է։

—Աղջիկդ կնոջդ քովէն առիր։ ատիկա ազէկ է, ես ալ քեզ պէս պիտի ընէի։ վռնտեցիր յանցաւոր կինդ, իրաւունքդ էր այդպէս ընել, նախատինքներ կան որոնց չկրնար մարդ ներել։ Այս բաներուն համար չեմ պարսաւեր զքեզ, կը հաւնիմ ըրածիդ։ Բայց ինչ որ կը մեղադրեմ քեզ, այն է որ չես հասկցած թէ ինչ պարտքեր կը ստանձնէիր զաւակդ ետ առնլով։

—Ի՞նչպէս, բացագանչեց կոմսը, պարտքերս չե՞մ հասկցած։

—Ոչ, պատասխանեց հոլանտացին հաստատ ձայնով մը, որովհետեւ չես ըրածինչ որ պարտ էիր ընել։ Աղջիկդ ձկնորսներու քով կը թողուս եւ կը սկսիս ճամբորդել՝ սփոփուելու, գաղափարներդ, զգացումներդ փոխելու, մոռացութիւն գտնելու համար։ Մինչեւ հոս ամեն բան լաւ է։ Աղջիկը կը մեծնայ, կը կազդուրի, կ'ամի արեւուն տակ։ Բայց յետո՛յ։ Նորէն քովդ կ'առնես զաւակդ ու անոր հետ կ'երթաս կը պահուըտիս տան մը մէջ ուր մարդ չընդունիլ որոշած ես։ Քիչ հեռու էք Ֆիօրէնձայէն, որ Իտալիայ ամենէն գեղեցիկ քաղաքներէն մէկն է, դիւրին է քեզ համար աղջկանդ մատակարարել այն զբօսանքներն, այն զուարճութիւնները. զորս կը պահանջէ իր տարիքը։ բայց, ո՜հ, դուք կը մնաք փակուած ինչպէս բանտի մը մէջ։

«Ճամբորդութիւններդ օգուտ չեն ըրած, չես կրցած վանել մթին գաղափարներդ եւ բոլորովին մարդատեաց եղած ներդ եւ բոլորովին մարդատեաց եղած ես։ Այս պատճառաւ է որ պահուած կը մնաս, մարդ չես ուզեր տեսնել։ Եթէ առանձին ըլլայիր աշխարհի վրայ, չէի մեղադրեր մարդատեցութիւնդ, կրնայի ընդունել որ ուզածիդ պէս ապրելու իրաւունք ունիս, նոյն իսկ կայս անտառի մը մէջ, գազաններու հետ։ Բայց դու աղջիկ մը ունէիր եւ պարտական էիր անոր։

—Պիտի ըսես որ չե՞մ սիրեր զայն։

—Ոչ, բայց պիտի ըսեմ որ քեզ համար կը սիրես զայն եւ ոչ իրեն համար։ հայրական սէրդ անմիտ եղած է չափազանց եսական ըլլալով, եւ առանց քու գիտնալուդ, աղջկանդ վրայ ազետաբեր ազդեցութիւն մը ունեցած է եւ ունի տակաւին։

—Օ՜հ։

—Թող որ շարունակեմ։ Ֆիօրէնցայի մօտ կ'ապրէիք, ուրեմն բացարձակ առանձնութեան մը մէջ։ Դասեր կուտաս Օռօուին, կը ջանաս կրթել զայն, ուրիշ բան չես կրնար ընել։ Քիչ մը վերջը պիտի խօսինք այն կրթութեան վրայ զոր ուզած ես իրեն տալ։ Մանկամարդ աղջիկը տխուր ու խոհուն կ'ըլլայ։ Կը նշմարես զայդ, բայց պատճառը չես փնտռեր։ մտքէդ չես անցուներ թէ աղջիկդ կ'սկսի մտածել, թէ իր մատաղ երեւակայութիւնը կը սկսի գործել։ Նոյն իսկ, որպէս թէ վախնայի այն մտաւորական կրակէն որ անոր ուղեղին մէջ կը բորբոքի, ամէն ջանք կ'ընես, անշուշտ ակամայ, զայն մարելու համար։

«Ուզեմ աղջիկը կը թառամի և կը հակի ինչպէս ծաղիկ մը զոր արեւը կը չորցնէ, և դու չես հասկնար որ օդը, կեանքի հիւթը կը պակսի անոր։ Վերջապէս, իրացնէ հիւանդ կ'ըլլայ։ Բժշկականութիւնն ուսումնասիրած ես։ կը դարմանես զայն։ միայն թէ, անոր մարմինը կը խնայուն, նոյն իսկ կայս անտառի մը մէջ, գազաններու հետ։ Բայց դու աղջիկ մը ունէիր եւ պարտական էիր անոր։

—Պիտի ըսես որ չե՞մ սիրեր զայն։

—Ոչ, բայց պիտի ըսեմ որ քեզ համար կը սիրես զայն եւ ոչ իրեն համար։ հայրական սէրդ անմիտ եղած է չափազանց եսական ըլլալով, եւ առանց քու գիտնալուդ, աղջկանդ վրայ ազետաբեր ազդեցութիւն մը ունեցած է եւ ունի տակաւին։

—Օ՜հ։

—Թող որ շարունակեմ։ Ֆիօրէնցայի մօտ կ'ապրէիք, ուրեմն բացարձակ առանձնութեան մը մէջ։ Դասեր կուտաս Օռօուին, կը ջանաս կրթել զայն, ուրիշ բան չես կրնար ընել։ Քիչ մը վերջը պիտի խօսինք այն կրթութեան վրայ զոր ուզած ես իրեն տալ։ Մանկամարդ աղջիկը տխուր ու խոհուն կ'ըլլայ։ Կը նշմարես զայդ, բայց պատճառը չես փնտռեր։ մտքէդ չես անցուներ թէ աղջիկդ կ'սկսի մտածել, թէ իր մատաղ երեւակայութիւնը կը սկսի գործել։ Նոյն իսկ, որպէս թէ վախնայի այն մտաւորական կրակէն որ անոր ուղեղին մէջ կը բորբոքի, ամէն ջանք կ'ընես, անշուշտ ակամայ, զայն մարելու համար։

«Ուզեմ աղջիկը կը թառամի և կը հակի ինչպէս ծաղիկ մը զոր արեւը կը չորցնէ, և դու չես հասկնար որ օդը, կեանքի հիւթը կը պակսի անոր։ Վերջապէս, իրացնէ հիւանդ կ'ըլլայ։ Բժշկականութիւ

Ֆէլ-ըշին Պերլինի թղթակիցը կ'իմանայ թէ Բրուսիոյ կառավարութիւնն երկու միլիոն մարքի վճարմամբ պիտի դնէ և իւրացնէ Տքթ. Քոխի հնարած դարմանը թոքախտի դէմ, և այս դարման Տէրութեան ծախիւք և ի հաշիւ Պետութեան պիտի պատրաստուի։

Մեքլեմպուրկի մեծ-դուքսն, որ երկար ժամանակէ հետէ հիւանդ է, Տքթ. Քոխէ տեղեկութիւններ խնդրեց, բայց Տոքթորը մերժեց, և այնու հանդերձ ծանոյց թէ «Ձեր վիճակին մէջ գտնուող հիւանդներ արդէն դարմանուած են այս մէթոտով»։

Ֆրանձ Եոզէֆ Կայսր ամսոյս վերջին չորթուն Ռաթիպոր պիտի երթայ, ուր Վիլհէլմ Կայսեր հետ պիտի տեսակցի, և միասին որսի պիտի ելնեն։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պերլինէն կը հաղորդեն մեզ թէ Երուսաղեմի Միաբանութեան վարչական Ժողովոյ Ատենապետ Դեր. Ղևոնդ Ծ. վարդապետ Մաքսուտեան անդուզուսրեր է մի քանի չաբաթ իւր ընտանեաց քով անցուցանելու։ Դեր. Ղեւոնդ վարդապետ սակաւօրեայ հանդիստէ մը յետոյ Երուսաղեմ կը վերադառնայ, իւր բազմազաղ պաշտօնին գլուխը անցնելու։

Շէրպէլթեան ընտանիքն հրապարակաւ իւր խորին շնորհակալիքը կը յայտնէ ամէն այն ազգականաց և բարեկամաց որք ներկայ գտնուեցան վաղամեռիկ Տր. ԵՐՈՒԱՆԴ Ե. ՇԷՐՊԷԹԵԱՆի յուղարկաւորութեան և այս տխուր առթիւ իրենց ցաւակցական զգացմանց հաւատիքն արտայայտեցին։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՊԱՇՏՕՆԱԲԱՇԽՈՒԹԻՒՆՔ ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՁՆԱՆՔ

Կեսարիոյ կառավարիչ անուանեցաւ Իզզէթ պէյ, նախկին կեդրոնական կառավարիչ Հալէպի նահանգին։

Պաղատի կեդրոնական ընդհանուր դատախազի օգնական անուանեցաւ Հասան Սամի էֆէնտի, ընդհանուր դատախազի օգնական Հըլէ դաւառին։

Պաղատի վերաքննիչ ատենի պատժական ճիւղին նախագահ անուանեցաւ Ղալիպ պէյ, ընդհանուր դատախազ վերաքննիչ ատենին Առանայի։

Առանայի վերաքննիչ ատենին ընդհանուր դատախազ անուանեցաւ Եուսուֆ Բէճաի էֆէնտի, կեդրոնական ընդհանուր դատախազի օգնական Սէլանիկի։

Հըլէ դաւառին ընդհանուր դատախազի օգնական անուանեցաւ Ապտուլլահ Վէֆիաի էֆէնտի, ընդհանուր դատախազի օգնական Նէճէտ դաւառին։

Իւլայի առաջին ատիճան տրուեցաւ Պերլինի օսմանեան դեսպանատան խորհրդական և գործակատար Օսման Շիւքրի էֆէնտիի։

Իւլայի երկրորդ ատիճան՝ նոյն դեսպանատան առաջին քարտուղար Ահմէտ Սայիմ պէյի։

Սանիյէի երկրորդ ատիճան՝ նոյն դեսպանատան երկրորդ քարտուղար Բէֆիզ պէյի և երրորդ քարտուղար Նազմի պէյի։

Առաջին կարգի Օսմանիյէ պատուանշան տարուեցաւ Ֆրանսայի Ներքին գործոց նախարար Պ. Քոնսթանի։

Երրորդ կարգի Օսմանիյէ՝ Պերլինի օսմանեան դեսպանատան զինուորական կցորդ դեր-դնդապետ Խայրի պէյի։

Ի ԿԱՅՍ. ՊԱԼԱՏ

Բարձր. Մեծ-Եպարքոսն և Բարձր. Շէյխ-Իւլ-Իսլամ էֆէնտին երէկ յաջորդաբար կայս. պալատ գնացին եւ ստացան Վեհ. Սուլթանի հրամանները։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Բարձր. Մեծ-Եպարքոսն երէկ ի Բերա ռուսական դեսպանատունը գընաց և տեսակցեցաւ դեսպան Պ. Նէլիտովի հետ։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Դատական նախարար Վսեմ. Բիզա փաշա երէկ Բ. Դուռը գնաց և կարեւոր խնդիրներու վրայ երկար խորհրդակցութիւն մը ունեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

—Բարձր. Մեծ-Եպարքոսն ու Արտաքին գործոց Վսեմ. նախարարն երէկ իրիկուն մինչեւ ուշ ժամանակ խորհրդակցեցան կարեւոր խնդրոց վրայ։

—Քաղաքապետ Բրսվան պէյ երէկ Բ. Դուռը գնաց և տեսակցեցաւ Բարձր. Մեծ-Եպարքոսին հետ։

—Ամերիկեան, պելճիական ու սերպիական դեսպանք երէկ յաջորդաբար Բ. Դուռը գնացին և տեսակցեցան Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին հետ։

ՀՈՐՆ ԷՖԷՆՏԻ

Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան խորհրդական Հորն էֆէնտիի պաշտօնավարութեան պայմանաժամն աւարտած ըլլալով, կայս. Իրատէ մը հրամայած է վերանորոգել զայն։

Կայս. սոյն Իրատէն Բ. Դրան կողմէ հաղորդուած է Առեւտրական եւ Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան։

——

ԹԷՎՖԻԿ ՓԱՇԱ

Պերլինի օսմանեան դեսպան Թէվֆիկ փաշա, որ ժամանակէ մը ի վեր մայրաքաղաքս կը գտնուէր, երէկ իրիկուն իւր պաշտօնատեղին ուղեւորեցաւ արեւելեան ճեպընթաց կառախումբով։

Թէվֆիկ փաշա մեկնելէ առաջ կայս. պալատ գնաց և իւր հրաժեշտի ողջոյնը մատուցանելով, արժանացաւ Վեհ. Սուլթանի մեծարանաց։

Ն. Վսեմութիւն յետոյ Բ. Դուռը գնաց և իւր հրաժեշտի ողջոյնը մատոյց Բարձր. Մեծ-Եպարքոսին, Արտաքին գործոց Վսեմ. Նախարարին, Վսեմ. խորհրդականին և այլ բարձրաստիճան պաշտօնատարներու։

——

ԿԱՐՆՈՑ ԱՆԳԼԻԱԿԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԸ

Այս աւուր Ս-դամ երեկի Սրմդ-էն առնելով կը ծանուցանէ թէ Կարնոյ անգլիական հիւպատոս Պ. Քիլիֆորտ-Լոյտ, անգլիական դեսպան Սըր Ռ. Հուայդի կողմէ հեռագրաւ մայրաքաղաքս հրաւիրուած ըլլալով, երէկ աստ պիտի ժամանէր։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Հեռագրական տեղեկութեանց համաձայն, երեքշաբթի օրուան ժամ 10էն մինչեւ չորեքշաբթի օրուան ժամ 10, Հալէպի մէջ հնոտախտէ 3 մահեր պատահած են, Անտիոքի մէջ 4 և Պիրէճիկի մէջ՝ 3։ Առջի օրն եւս Համայի մէջ՝ 3 և Հոմսի մէջ 40 վարակեալ ու 22 մեռեալ։

——

ԱՍԻԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

Ցայտնի է թէ ասիական երկաթուղեաց ընդհանուր երկրաչափ Պ. Քաբէնկիւրի դնացած է այդ կողմէն եւս երկաթուղիներու շինութեան ձեռնարկելու համար։

Արդ, Չնկ(ի)ւրիի գաւառական թերթին կողմէ տրուած տեղեկութեանց համաձայն, ընկերութիւնը ամենայն փութով գործի սկսած է։ Ճամբուն երկու կողմը հարկ եղած տեղերու վրայ ձեռնարկած է գործաւորաց բնակութեան համար տաղաւարներու, երկաթագործաց և այլոց խանութներու շինութեան։ Կայարանը պիտի շինուի Էնկիւրիի Պէյլիկ Զայրրի մէջ գտնուած Տիքիլի Թաշ անուն տեղը։ Հարկ եղած պատաստութիւնք կը տեսնուին շինութեան ձեռնարկելու համար։

Երկաթուղոյ շինութեանց ամենէն դժուար տեղն էր Կէյվէի և Էսկիշէհրի միջեւ եղած միջոցն, սակայն ասոր ևս նախնական շինութիւնք աւարտած են։ Ցառաջիկայ մարտ ամսոյն առաջին կառախումբը Էսկիշէհր պիտի մտնէ։ Այդ միջոցին Էնկիւրիի կողմը կատարուած աշխատութիւնք եւս պիտի աւարտին, որով վերջնապէս որոշուած է 1892 ի մարտ ամսոյն կատարել ասիական ընդհանուր գիծերու բացումը։

——

ՇԵՐԱՄԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Անցեալ յունիս ամսոյ 30ին պաշտօնապէս ծանուցուած էր թէ Ռեւեւտրական ու Հանրօգուտ շինութեանց Նախարարութեան և Հանրային Պարտուց Վարչութեան միջեւ տրուած որոշման մը համաձայն, Պրուսայի մէջ կազմեալ յատուկ յանձնաժողով մը, յետ քննութեան, վկայականներ պիտի տար անոնց որք տեղական շերամաբուծութեամբ կ'զբաղին և միանգամայն պիտի վաւերացնէր օտար երկիրներէ վկայական ունեցողներու վկայականը։

Արդ, մինչեւ անցեալ սեպտեմբեր ամսոյ 15ը՝ 73 շերամաբոյծներ աղերսագիր տուած են քննութիւն տալու համար և ասոնցմէ 63ը միայն ներկայանալով քննուած են յանձնաժողովին կողմէ։

Աւասիկ այդ դիմողներու անուններն ու իրենց ստացած վկայականի աստիճանն, ինչպէս նաեւ մետաքսագործութեան համար հաստատեալ վարժարանէն անցեալ տարի եւ այս տարի վկայական ստացողներու անունները։

Յանձնաժողովը, յետ քննութեան, վաւերացուցած է հետեւեալ անձերու ունեցած օտար վկայականները։

Մարարիոս Էֆէնտի Զարիֆեան, Անասթասիոս Քոսթանթինիս էֆէնտի, Թէոդոսս Անասթասիատիս էֆէնտի եւ Եորկի Բամպունիսի էֆէնտի։

Առաջին կարգի վկայական տրուած է հետեւեալ անձանց։

Գառնիկ էֆէնտի Արսէնեան, Յովհաննէս էֆ. Տէրվիշեան, Գրիգոր էֆ. Միխայեան և Անթուան Արիկ էֆէնտի։

Երկրորդ կարգի վկայական տրուած է հետեւեալ անձանց։

Մարթի Օղու Ահմէտ էֆէնտի, Գարեգին էֆէնտի Փափազեան, Բրիշարքի Իրատիս էֆէնտի, Միհրան էֆէնտի Ճամճեան, Յովհաննէս էֆ. Սարբեան, Իրոքրատ Տիտիմոս էֆէնտի, Աթանաս էֆէնտի Տէմճեան, Օմրոս Բոմէնէոս էֆէնտի, Թէրզի Աթանաս էֆ., Հասան Նուրի էֆ., Եորկիոս Թէոդոզիտի էֆէնտի, Աղաս Եագոպոս էֆէնտի, Վասիլաքի էֆէնտի Համի Եուսան օղու, Վասիլաքի էֆէնտի Ճէպէէէնի Օղու և Լէոնիտի Նոմիտիս էֆէնտի։

Երրորդ կարգի վկայական ստացած են հետեւեալ անձինք։

Պետրոս էֆ. Կիւմիւշեան, Ֆէլիքս Կէտէոն էֆ., Գէորգ էֆ. Զէրքէսեան, Բէրիքլի էֆ. Հէքիմ օղու, Քիրեաքոս էֆ. Թիմիտի էֆ., Ուլիս Մէրքիւլէն էֆ., Ճիվանի Սթավրոքորուլոս էֆ., Համի Եանի օղու Եանի էֆ., Խարալամպոս Բաբատորուլոս էֆ., Բէնչպէր օղու Բրիսթիտի էֆ., Գուլնուրաքը օղու Քոսթանթին Թանաշ էֆ., Արոսթոլ օղու Եորգի էֆ., Մուշեղ էֆ. Սէրէնեան, Լէոնիտի Քալիցա էֆ., Եորկաքի Զավերի էֆ., Յարութիւն էֆէնտի Մելքիսեդեան, Աստատուր էֆ. Մելքոնեան, Կարապետ էֆ. Նահապետեան, Տոքթ. Տիմիթրաքի Թէրտանիտի էֆէնտի, Կարապետ էֆ. Քէօմիւրճեան, Առաքել էֆ. Արզումանեան, Նիքօղայ օղու Անասթաս էֆ., Տիրան էֆ. Շէֆիթեան, Ալէքսանտրոս Զողրաֆոփոս էֆ. և Տիմոթէոս էֆ. Պալըքճեան։

Անցեալ տարի մետաքսագործութեան վարժարանէն վկայական ստացած են։

Յովհաննէս էֆէնտի Տէր Աբրահամեան, Ժողէֆիտի Էլիազարս էֆէնտի, Թրիսթօ Տոլիտի էֆէնտի, Երուանդ էֆէնտի Գուրեան, Յովհաննէս էֆէնտի Լուիթեան, Յուսիկ էֆէնտի Տէլլպեան, Սիւլէյման էֆէնտի, Ստեփան էֆէնտի Հաբրեան, Եռանիտի Տիմիգրի էֆէնտի, Սինեքերիմ էֆէնտի Հէլվաճեան, Անանիա Միլէթէոս էֆէնտի և Մուսթաֆա էֆէնտի։

Իսկ այս տարի նոյն վարժարանէն վկայական ստացած են։

Պողոս էֆէնտի Տէյիրմէնճեան, Ահարոն էֆ. Պոյաճեան, Յակոբ էֆ. Անդրէասեան, Տիգրան էֆ. Սէֆերճահեան, Յարութիւն էֆ. Սարկաեան, Իլիա էֆէնտի Համի Անասթասիատիս, Գրիգոր էֆ. Գալբաքեան, Տելիմաք էֆէնտի, Պողոս էֆ. Տէրվիշեան, Միխաիլիտիս էֆէնտի, Զենոբ էֆ. Օհանեան, Մաքսուտ էֆ. Փափազեան, Արիկ էֆ. Զէթէճեան, Եուվան էֆ. Քալբաքիտի, Անթուան էֆ. Օհանեան, Գրիգոր էֆ. Թրնկրեան, Ագարիկ էֆ. Անտոնեան, Յովհաննէս էֆ. Զէյլպեան, Պողոս էֆ. Էֆէյեան, Նիքօղայ էֆ. Բատմանթօ, Բարունակ էֆ. Շիշմանեան և Բարունակ էֆ. Պալապանեան։

Վկայական առնելու համար աղերսագրով յանձնաժողովին դիմողներէն երեքը միայն չեն կրցած վկայական ստանալ և հետեւաբար յառաջիկայ տարուան մնացած են։

——

ՕՍՄ. ՆԱՄԱԿԱՏՈՒՆ

Պոլսոյ հայ վաճառականաց ոմանց կողմէ հետեւեալն կը հաղորդուի մեզ.

Կը խնդրենք Աբէ-Եէլի խմբագրութենէն հրապարակաւ թարգման լինիլ մեր շնորհակալեաց առ Օսմ. Նամակատան Պալըգ Բազարի մասնաճիւղի միւտիր Վէհպի էֆէնտին, որ իւր պաշտօնին մէջ խիստ արժանաւոր լինելով, կարգապահութիւնն ըստ ամենայնի յարգել կուտայ պաշտօնէից և ամէն կարգի դիւրութիւններ կ'ընծայէ վաճառականաց եայլ իրեն դիմող անձանց։ Այսպէս, անցեալ չաբաթ երեկոյ, երբ նամակատան պաշտօնեայք կը մերժէին նամակներ յանձնել տէրերուն՝ ուշ լինելն առարկելով, յիշեալ Վէհպի էֆ-ի շնորհիւ ամէն ոք կարողացաւ ստանալ իւր նամակն ու ըստ այնմ գործադրել առանց երկու աւուր յապաղումէ մը սասնալու։ Ուստի կը խնդրենք որ յօրինակ այլ պաշտօնէից հրատարակուի Վէհպի էֆէնտիի պաշտօնական արժանաւորութիւնն ու մեր խորին երախտագիտութիւնը առ Վեհ. Սուլթանն որ այսպիսի արժանաւոր անձինք պաշտօնի գլուխ անցուցնելու շնորհ ըրած է։

——

ԿՐԷՏԷ

Կրէտէի մէջ Սուլթանիյէ վարժարան մը հաստատելու համար արդէն որոշում տրուած և Հանեաի մէջ ալ այդ վարժարանին հաւասար բարձրագոյն վարժարան մը հաստատուած էր։ Սակայն նկատելով որ Սուլթանիյէ վարժարանի մը պէտքն օր օրի աւելի զգալի կըլլայ, կղզւոյն կուսակալութիւնը քանիցս դիմած է Բ. Դրան արտօնութիւն խնդրելով։ Արդ, Բ. Դուռն որոշած է 300.000 ղրուշ յատկացնել այդ վարժարանի հաստատութեան համար և այդ առթիւ պէտք եղած հրամանները տալու վրայ է Կրթական Նախարարութեան։

——

Պ. ԵՒ ՏԻԿԻՆ ՆԷԼԻՏՈՖ

Ռուսական դեսպանուհի տիկին Նէլիտոֆ որ ժամանակէ մը հետէ Բարիզ կը գտնուէր իր անձնական տարութիւնը դարմանելու համար, նախընթաց իրիկուն մայրաքաղաքս հասաւ արեւելեան ճեպընթաց կառախումբով։ Պ. Նէլիտոֆ և դեսպանատան գլխաւոր պաշտօնեայք Սիրքէճիի կայարանը գացած էին ընդ առաջ դեսպանուհւոյն։ Տիկին Նէլիտոֆ դեսպանատան պահակ Քոզաք շոգենաւով երէկ Պիրէոն պիտի ուղեւորէր, սակայն իւր մեկնումն այսօրուան թողած է։ Ցայտնի չէ թէ Պ. Նէլիտոֆ իւր տիկնոջ պիտի ընկերանայ թէ ոչ։

——

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՒԶԱՐԿՈՒԹԻՒՆՔ

Կ. Պոլսոյ Ֆրանսական դեսպանատան երկրորդ թարգման Պ. Բլէման Հիւառ վերջերս կարեւոր հետազօտութիւններ կատարած էր ի Փոքր-Ասիա, արեւելեան հին գրութիւններ ձեռք ձգելու համար։ Պ. Պարպէկ որ Մէյնառ այս օրերս Բարիզու գեղարուեստից կաճառին հաղորդած է արդիւնքն այդ հետազօտութեանց որոց նպատակն էր Գարամանի մէջ (նախկին Լիկաօնիա և Իսաւրիա) և գլխաւորաբար Քոնեայի մէջ (Իկոնիոն) իսլամական արձանագրութիւններ փնտռել։ Սէլճուքեանց ժամանակէն մնացած, (Քրիստոսի թուականէն 1087—1300 տարի ետքը)։ Պ. Հիւառ յիսունի չափ արձանագրութիւններ գտած է, առանց հաշուելու լատիներէն և յունարէն գրութիւնք։

Կայս. հրամանաւ Ֆէրիգուեթեան աստիճան տրուած է ձէզաիրցի Էմիր Ապտիւլգատէրի որդի Մէհմէտ փաշայի, որ վիանգամայն էրթողրուլ հեծելագնդին մէջ պաշտօնի կոչուած եւ կայս. թիկնապահաց կարգը դասուած է։

—Բեդրապուրկի օսմանեան դեսպանատան նորընտիր խորհրդական Իհսան էֆ. եւ նորընտիր երկրորդ քարտուղար Սէրվէթ պէյ հրաման ստացած են անմիջապէս իրենց նոր պաշտօնատեղին ուղեւորելու համար։

—Պէրութի ջուրի ընկերութիւնն, որուն մենաշնորհի պայմանաժամը լրանալու համար տակաւին քսան տարի կայ, ինչ ինչ օգտակար պայմաններ ցոյց տալով, խնդրած է երկարել մենաշնորհի պայմանաժամը, սակայն պատասխան տրուած է իրեն թէ կայս. կառավարութիւնն առայժմ չպիտի կրնայ հաւանութիւն տալ այդ պայմանաժամի երկարելուն։

—Տրապիզոնի նահանգին խճուղեաց առաջին երկրաչափ Ապտիւրրահմանի էֆէնտի Պոլսոյ եւ Զաթալճայի խճուղեաց առաջին երկրաչափ անուանած է։

—Երէկ Վառնայէն մայրաքաղաքս եկան երեսուն եւ հինգ տնուոր ռումելիցի գաղթականներ։

—Թէրիգ Շաքիր փաշա, որ մամզէրեան հրացաններու ստացման եւ քննութեան համար Գերմանիա կը գտնուէր, երէկ մայրաքաղաքս ժամանեց։

—Մախասուսէի Կէչէտ շոգենաւն, յորում կը գտնուին 150 ի չափ ուխտաւորք, այս առաւօտ Պոլսոյ նաւահանգիստը ժամանեց։ Այս շոգենաւ ի Տարտանել 24 ժամուան քարանթինայի ենթարկուած է։ Ուխտաւորաց առողջական վիճակը խիստ գոհացուցիչ է։

—Անգլիական ընդհ. հիւպատոս Պ. Հանրի Ֆառուսէդ որ արձակուրդով բացակայ կը գտնուէր, մայրաքաղաքս վերադարձաւ։

—Կ'ըսուի թէ Պապը կարդինալութեան աստիճանի պիտի բարձրացունէ Երուսաղեմի լատինաց Պատրիարքը։

—Պ. Պ. Բէյնաք և Պիքէլաս երէկ մեկնեցան մայրաքաղաքէս յԱթէնք։ Պ. Բէյնաք Յունաստանի մէջ պիտի կատարէ այն հնագիտական պաշտօնն որ յանձնուած է իրեն՝ Ֆրանսայի կրթական Նախարարութեան կողմէ։

—Պ. Էօժէն Բաբաբոր, որ Աւստրիոյ-Հունգարիոյ կառավարական պաշտօնէից Ապահովագրական ընկերութեան հիմնադրաց մին է, այդ ընկերութեան հաստատման 25ամեայ տարեդարձի հանդէսներուն ներկայ գտնուելու հրաւիրուած ըլլալով, երէկ իրիկուան կառախումբով մեկնեցաւ մայրաքաղաքէս ի Վիեննա։

—Կայս. Իրատէ մը հրամայած էր որ առեւտրական նաւեր շինողներու համար արքունի անտառներէն ձրիաբար տրուին հարկ եղած ատաղձները։ Արդ, այդ արտօնութիւնէն օգտուելով ցարդ 8—10 անձինք ձեռնհաս իշխանութեան դիմած և արտօնութիւն ստացած են նոր նաւերու շինութեան համար արքունի անտառներէն ձրիաբար ատաղձ ստանալու։

—Հեռագրական և թղթատարական վարչութիւնը կը ծանուցանէ թէ Հալէպի Զէյթունն գաւառակին մէջ հեռագրական կայարան մը հաստատուած է, ուր պիտի ընդունուին նաև թղթատարական պարզ ու յանձնարարեալ նամակներ։

—Տրապիզոնի գաւառական թերթին մէջ կը կարդանք թէ Շապին Գարահիսարի բանտը ծակելով խոյս տուող աւազակաց երկուքն Օրտուի մէջ ձերբակալուած են։

—Երկրագործական տնօրէն Նուրի պէյ և կեդրոնական քննիչ Ագաթօն էֆէնտի երէկ Հալքալը գնացին և աշքէ անցուցին տիպար-ագարակի շինութիւնն, որ աւարտելու վրայ է։

—Թասըմ Փաշայի ոստիկանապետ Շէմսէտտին էֆէնտի Ղալաթիոյ Վոյվոտա պահականոցին ոստիկանապետ անուանած և այս վերջինէն ալ Հասան էֆէնտի Դասըմ Փաշա փոխադրուած է։

—Ոստիկանական վարչական ժողովոյ երեկի նստին մէջ, որ տեղի ունեցաւ ընդ նախագահութեամբ Պոլսոյ ոստիկանապետ Ակեահ էֆէնտիի, որոշուեցաւ հեռաւոր վայրեր աքսորել մէկ քանի վաղեմի չարագործներ, որոց մայրաքաղաքս մնալը յարմար դատուած չէ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տարտանելէն կը գրեն մեզ։

Քաղաքիս բնակիչներէն կոչակաւոր Գոստիկեան Մարկոսի մանկամարդ կինը Կիւլիւնէ Մարկոսեան՝ իւր առաջին ծննդաբերութեան հետեւանօք արգանդի անբուժելի հիւանդութենէ մը վարակուած էր, և հակառակ բժշկական ամէն խնամոց իւր հիւանդութիւնն օր ըստ օրէ առաւել սաստկանալով բժիշկք ամէն յոյս կտրած էին, եւ խորհրդակցութենէ մը վերջ նորա մահը անխուսափելի վճռած էին։ ցաւալին այն էր որ իւրեանց աղքատութեամբը չէին կարող այլ եւս դարմաններու ետեւէ ըլլալ։ Այս անոյշ վիճակին մէջ, տեղւոյն թաղապետական բժիշկ Տօքթ. Ալէքսանդր Սիլվէսթրօ, որ իւր աղքատասիրութեամբն հանրածանօթ է արդէն, գրեթէ երեք ամիս շարունակ, գիշեր թէ ցորեկ անձնուիրաբար խնամելով յիշեալ ադքատիկ կինն, յաջողած է զայն ազատել մահուանէ ի մեծ ուրախութիւն իւր ծնողաց եւ պարագայից։ Հիւանդին տէրը, Կոստիկեան Մարկոս, յոյժ ադքատիկ գոյով եւ անկարող վճարելու բժշկին 200 է աւելի այցելութեանց դինն, գէթ ի բարոյական վարձատրութիւն յիշեալ Մեծ. Տօքթորին՝ կը խնդրէ որ հաճիք ներկայս հրատարակել, իբր թարգման իւր հրապարակային շնորհակալեաց։ Յիշեալ բժշկին առ մեր ազգայինս ցուցած մարդասիրութիւնք բազմաթիւ են արդէն։

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

Կ. ՊՈԼՍՈՅ ԴՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԷՆ

ԱՅՍ ՕՐՈՒԱՆ

ՄԱՏՐԻՏ, 13.— Մխախոտի պետական գործարանը գրեթէ ամբողջովին հրոյ ճարակ եղաւ։ 6.000 անձինք անգործ մնացին։ Քրիստինէ խնամակալ թագուհին հրդեհին վայրն եկաւ։ Բազմութիւնը զինք տեսնելով, համակրալից աղաղակներով ողջունեց։

ՊԵՐԼԻՆ, 13.—Պէտրէն Բ-ոյէր Սակարանի կարեւոր լրագիրը կը հաստատէ թէ Տքթ. Քոխի գիւտն այնքան յառաջ գացած է որ 100 անկողնով առ ի փորձ հիւանդանոց մը հաստատել կը խորհուի։

ԱԹԷՆՔ, 13.—Զարեւիշն եկաւ, ժողովրդեան կողմէ համակրալից ընդունելութիւն գտաւ։ գիշերը քաղաքին մէջ լուսաւառութիւնք եղան։

ՓԱՐԻԶ, 13.—Այս երեկոյ մեծ հացկերոյթ նախագահական պալատան մէջ ի պատիւ Դանիոյ գահաժառանգին։ Այսօր մեծամարտեցան Պ. Լակէռ երեսփոխանն և Պ. Տէրուլէտ բանաստեղծն, երկրորդին նախկին Պուլանժիստականք։ Պ. Տէրուլէտ օդին մէջ պարպեց իւր ատրճանակն։ Ոչ ոք զարնուեցաւ։ Երկուքն ալ ձերբակալեցան։

ՆԻՒ ԵՈՐՔ, 13.—Հոնտուրասի մէջ վերստին քաղաքային պատերազմ ծագելուն պատճառաւ Կուատէմալայի նախագահն օգնութիւն ղրկեց նախագահին։ Կը վախցուի նոր պատերազմէ մի ի կեդր Ամերիկա։

ՃԷՆԱՅԻՐ, 13.— Ի պատիւ Տիւքէռէ ծովակալին հացկերոյթ տալով Լավիժերի կարտինալն ըսաւ թէ միութիւնն հարկաւոր է և թէ պէտք է որ Ֆրանսայի կրօնքն առանց վերապահութեան ճանչնայ Ֆրանսայի կառավարութեան արդի հանրապետական ձեւն, որ ազգին կողմէ քանիցս վաւերացուած է։ Յոյս յայտնեց որ կղերն ամբողջովին կը յարի այս գաղափարին, որովհետեւ չի կարծեր որ կղերական կարեւոր հեղինակութիւն մը այս գաղափարին դէմ խօսի։ Այս խօսքեր ուշագրաւ են, Լավիժերի կարտինալն կարեւոր դերից պատճառաւ։ Կարտինալն Ափրիկեան Սպիտակ Հարց նուագարաններուն Մ-ոյէյէր երգն հնչեցնել տուաւ այս առթիւ։

ՀՌՈՄ, 13.— (Ա. Հ. Գ.)— Պատերազմական նախարարն, իւր եւմատոյցը մատուցանելով, յայտարարեց իւր պաշտօնակցաց թէ անկարելի է իրմէ խնդրած 50 միլիոն ֆրանկ գտնել, եթէ չուզուիր զօրաբանակաց թիւը 12էն 10ի իջեցնել։ Այսպիսի տնօրինութեան մը համակերպելու փոխարէն իւր հրաժարականը տալ նախամեծար կը գտնէ։ (Արև. Հեռ. Գործակալութեան ենոյտ 13։ թուականաւ իբրև նոր լուր մեզ հաղորդած այս «Հեռագիրը» Փարիզի լրագիրք նոյնութեամբ հրատարակած էին արդէն իրենց նոյտ. 10 թուով, որ մեռքերնիս է։ Ծ. Խ. (Աբէնէլ)

ՄԻԼԱՆ, 13. (Ա. Հ. Գ.)—Պաշտօնաւորի մը կողմէ հաղորդեալ տեղեկութեան նայելով, Պ. Պ. Քրիսպիի և Քաֆրիվիի խորհրդակցութեան նպատակն էր Իտալիոյ և Գերմանիոյ միջեւ համաձայնութիւն մը՝ Ֆրանսական մաքսապաշտպանութեան դիմադրելու համար։ (Արև. Հեռ. Գործակալութեան իբր նոր լուր նոյտ 13։ թուով մեզ հաղորդած այս «Հեռագիր» աւելի մանրամասն և աւելի ճշգրիտ ձեւով հաղորդուած է Միլանէ առ Ֆէլիչէ նոյտ 9 թուով, և նոյն թերթին նոյտ. 10 թուոյն մէջ հրատարակուած, որ ձեռքերնիս է արդէն։ (Ծ. Խ. Աբէնէլ)։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՈՐՍԱ

Գալաթիա, 2 Նոյեմ.

Օսմանեան Քոնսոլիտ	
Երեկ երեկոյ դոց. (Մէջտեղ. Ի. Մէկտ)	19 34
Առաւաւտեան բացուելուս	20 2
Կեսօրուան »	20 1
Թահվիլաթը Օսմանիէ երեկ երեկոյ	79 16
» » ժամ 3ին	79 20
ՇՆՈՐՀԱԿԱԼ ԱԹԵՐ	
Հետաքրքրութիւն A. Յանձ.	41 5/8
» B. »	22 5/8
» C. »	20 2
ԲԱԺՆԵՑՈՒՄՆԵՐ	
Սուսանեան Գրիվնա (Մէջտեղ. Ի. Մէկտ)	4 32
Գրեթի ժենեկրալ (Մէջտեղ. Ի. Մէկտ)	9 20
Ռանդ ու Պոնտ (Մէջտեղ. Ի. Մէկտ)	6 28
Ռոս. Շոսէ եվրէօր (Մէջտեղ. Ի. Մէկտ)	4 30
Թրամուէյ (Մէջտեղ. Ի. Մէկտ)	530
Ռոս. մեկ ի երեսթ. (Մէջտեղ. Ի. Մէկտ)	78 75
Բանքնոթաց Լավիժոմ (Մէջտեղ. Ի. Մէկտ)	145

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՈՐՍԱ

Բարիզ, 13 Նոյեմբեր, ժամ 3 վայր 40 երեկոյ

Արտաքին Ռանթ 3 %	95 12 1/2
» » 3 1/2 %	105 10
Օսմանեան քոնսոլիտ Մէրի Դ.	18 52 1/2
Օսմանեան երկաթուղի	79
» Բեմիի բանքնոթաց	310
Պանք Օթոման	628 75
Դրեսար Լիոնէ	815
Իտալական Ռանթ 5 %	94
Հիշլենական 5 %	462 50
Բրիսիլիա Թիւրք (1890)	410
Եգիպտական միացեալ	484 37 1/2
Պանք աբ Բարի	875
Օսմ. մնաց. արժէթուղթ	462 50
Ռուէիի ջրանցք	2412 50
Պանիական արտաքին	75 13/16
Ռիո Թինթօ	610
Մէռիտոս	693 75
Զէր (Սեռպրի մրոյ)	25 35 1/2

Լոնտոն, 13 Նոյմ. ժամ 6 վայր — երեկոյ

Ռենթ (Մէջտեղ. Ի. Մէկտ)	94 3/16
Օսմ. » Մէրի Դ.	18 3/16
» » » Ա.	41 3/8
» » » Բ.	22 5/8
» » » Գ.	18 3/16
Ռուսական 1877	100 3/8
Ջանը Օթոման	15 1/16
Եգիպտական միացեալ (Ունիֆիէ)	95 5/16
» առանձ. (Բրիվիլեժիէ) Նոր	90
Ռիո Թինթօ	24 1/8
Սուսանեան (Փոխան. Բանկիրներ)	102 3/4
Հիշլենական 5 %	89 1/2 (?)
Մենքոլ »	72 1/4
Ռուսական 1889	97 3/4
Ֆոխանակութիւն Բարիզի վրայ	25 36

Վիեննա, 13 Նոյմ. ժամ — վայր —

Օսմանեան երկաթուղի	37 70
» Բեմիի բանքնոթաց	135
Ֆոխանակութիւն Լոնտոնի վրայ	115 90

Պերլին, 13 Նոյմ. ժամ — վայր —

Ֆոխանակութիւն Լոնտոնի վրայ	20 35
Ռուսական թղթադրամ	248 50
Օսմանեան երկաթուղի	80 50
Օսմանեան քոնսոլիտ Մէրի Դ.	18 15

——

ԲԱՐԻԶ ԲԹԻԹ ՊՈՒՐՍ

Բարիզ, 13 Նոյմ. ժ. — վ. — երեկոյ

Ֆրանսական Ռանթ 3 %	95 37 1/2
Օսմանեան քոնսոլիտ Դ.	18 65
Օսմանեան երկաթուղի	79
Օսմ. Բեմի	311 25
Բրիսիլիա Թիւրք	408 75 (?)
Օսմ. Մաքս. արժէթուղթ	463
Պանք Օթոման	633 75
Ռիո Թինթօ	615

